

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՔԸ  
ԵՒ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ  
Թ. ԴԱՐԻ ՎԵՐԶԻՆ և Ժ. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայոցիտութեան համար կարեւոր նշանակութիւն ունի Հայ Բագրատունիների տէրութեան ժամանակաշրջանում Վասպուրականի իշխանութեան տարածքի եւ վարչական բաժանումների քննութիւնը, քանի որ ցայսօր այդ հիմնահարցերն առանձին ուսումնասիրութեան առարկայ չեն դարձել: Լաւագոյն դէպքում հայոցէտներն այս հիմնահարցերին անդրադարձել են համառօտակի եւ աւելի ընդգրկուն ժամանակաշրջանի համատեքստում:

Դատելով պատմիչների տեղեկութիւններից՝ Վասպուրականը Հայ Բագրատունիների տէրութեան ժամանակաշրջանում մի քանի անդամ ներքին վարչական վերաձեւման էր ենթարկուել:

Շապուհ Բագրատունին կարեւոր մի յիշատակութիւն է պահպանել այն մասին, որ 850-ական թթ. երկրորդ կէսին գերութիւնից վերադարձած եւ Վասպուրականի իշխան դարձած Աշոտ Արծրունու (մահ. 874/875 թ.) երեք որդիները միմեանց միջեւ բաժանել են Հայրական ժառանգութիւնը. «զվանն, որ ի գաւառն Տուրայ՝ Գրիգոր-Դերեն քաջին, իսկ ամուրն Կայան եւ Տոտոր ամրոցն եւ զնուաշայ գաւառն միւսն եղրօրն Գագկայ, իսկ տունն Հայրակոյ Համազասրայ կրտսերին»<sup>1</sup>:

Այսպիսով վան քաղաքքը՝ շրջակայ գաւառներով անցաւ Գրիգոր-Դերէնին, կայան եւ Տոտոր կամ Կոտոր ամրոցները (Աղբակ գետի վերին հոսանքի աւազանում) եւ Ճուաշ գաւառը՝ Գագիկին, իսկ Աղբակ գաւառը՝ Համազասպ կրտսերին: Այսինքն՝ առաջին եղրօրն անցել է Արծրունիների իշխանութեան արեւմտեան, երկրորդին՝ հիւսիսարեւելեան, իսկ երրորդին՝ հարաւային հատուածը: Ինչպէս տեսնում ենք, Շապուհ Բագրատունու տեղեկու-

<sup>1</sup> «Պատմութիւն Շապիոյ Բագրատունոյ», ի րյու ածին Գ. Տեր-Մկրտչեան եւ Մեսրոպ Կայսերական, էջմիածին, 1921, էջ 39-40.

թիւնը մանրամասնութիւններ չի պարունակում, որի պատճառով յատակութիւն մտցնել այս շրջանում Վասպուրականի իշխանութեան տարածքի, սահմանների եւ վարչական բաժանման մէջ դժուար է: Կարելի է միայն ասել, որ գահերեցութեան իրաւունքը պատկանում էր Գրիգոր-Դերէնին կամ Գրիգոր-Դերէնիկին (Վասպուրականի իշխան 874/875-885 թթ.), որ տիրում էր Վան քաղաքը՝ ըրջակայքով:

Վասպուրականի իշխանութեան երկրորդ բաժանումը տեղի է ունեցել Գրիգոր-Դերէնիկի մահից (885 թ.) յետոյ: Նրա երեք որդիները գեռ մասնուկ էին, եւ Հայոց թագաւոր Աշոտ Ան (885-890) Վասպուրականի իշխան կարգեց նրանցից աւագին՝ Աշոտին, բայց Գագիկ Ապումրուան Արծրունուն էլ նշանակեց ոստիկան, կամ ինչպէս պատմիչն է յատակեցնում՝ հրամայեց «տեղապահութեամբ տիրել», մինչեւ մանուկները հասակ կ'առնէին<sup>2</sup>: Մըբատ Ա-ի թագաւորութեան Յ-րդ տարում, այսինքն՝ 893 թ., Դուխնում երկրաշարժ տեղի ունեցաւ: Աշոտէնետեւ պատմիչը նկարագրում է երկրաշարժից երկու տարի յետոյ տեղի ունեցած դէպքերը եւ նշում, որ Գրիգոր-Դերէնիկի որդիները բաժանեցին իրենց հայրական տիրութեամբ, եւ Աշոտին անցաւ «զգահն նախնական իշխանութեան այլովք յոլովագոյն միջոցօք աշխարհիս, մինչեւ յամուրն նախնաւանու: Իսկ Գագիկ զկողմանն Ռշտունաց այլովք մօտակացիք գաւառօք, եւ որքան իցէ հասումն ուժոյ՝ անդր եւս յաշխարհն Մոկաց: Եւ Գուրգէն զկողմանն արեւելից, յելից Արդագոյ եւ որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչեւ ի մուտս Կորդաց, եւ ուր եւ ըստ այնմ իցէ հնար ածել զծեռամբ»<sup>3</sup>: Բայց Գագիկ Ապումրուան իշխանը՝ պատճառ բերելով Դերէնիկի որդիների մանկահասակութիւնը, տիրեց Նկան ամրոցը Թոռնաւան գաւառում, Կոտոր ամրոցը՝ Անձախիձորում (ընծայից ձոր) եւ Սեւան ամրոցը՝ Լմբա ձորում, այսինքն՝ իշխանութեան կենարունական հատուածը, բայց այլ յաջողութիւնների չհասաւ<sup>4</sup>:

Աշոտ Արծրունուն անցած «զգահն նախնական իշխանութեան» արտայատութիւնը մեր կարծիքով վերաբերում է Մեծ Աղբակ գաւառին, որտեղ գտնուում էր Արծրունեաց ոստան

<sup>2</sup> Տիւ Թովմա Արծրունի եւ Սնանուն, Պատմութիւն տան Արծրունեաց, բնագիրը հրատարակութեան պատրաստեց Վ. Վարդանեան, Երևան, 1985, էջ 354:

<sup>3</sup> Անդ, էջ 360:

<sup>4</sup> Անդ:

Հագամակերար<sup>5</sup>: Բացի այդ Աշոտին անցան նաեւ Վասպուրականի՝ Աղբակ գաւառից մինչեւ Նախճաւանի մատոյցներ, այսինքն՝ Երասիս գետ ընկած գաւառները: Գագիկին բաժին հասաւ Ռշտունեաց կողմանքը, այսինքն՝ Ռշտունիքը՝ շրջակայ գաւառներով եւ նաեւ այն գաւառները, որ նա կը կարողանար տիրել ուժով, ինչպէս նաեւ Մոլքը: Գուրգէնը ստացաւ Վասպուրականի իշխանութեան՝ Աղբակից արեւելք ընկած հատուածը, շրջակաքի՝ Պարսկահայքի գաւառները եւ Կորճայքի հիւսիսային գաւառները, ինչպէս նաեւ այն շրջանները, որ նա կը կարողանար տիրել ուժով: Խօսքը Պարսկահայքի եւ Կորճայքի այն գաւառների մասին է, որոնք նախկինում Արմինիա ոստիկանութեան Երրորդ Արմինիա վարչական շրջանի մաս էին կազմում, Պարսկահայքից՝ Հեր, Զարեւանդ, Զարեհաւան, Ալլի, Թրաբի, Տամրեր եւ Ըռնա գաւառները եւ Կորճայքից՝ Կորդիք, Ճահուկ, Փոքր Աղբակ եւ Որսիրանք գաւառները<sup>6</sup>: Ինչպէս կը տեսնենք, Հերի ամիրայութիւնը, որ ընդգրկում էր նաեւ Զարեւանդը եւ շրջակայ որոշ գաւառներ, իրեն էր ենթարկել Գրիգոր Դերենիկը:

Երբ Վասպուրականի Աշոտ իշխանը (885-904) գնաց Ափշինի մօտ, Մըրաս Ա-ն նրան պատժելու նպատակով կանչեց իր մօտ Գագիկ Ապուրուանին եւ Գուրգէն Անձեւացուն, որ, ինչպէս կը տեսնենք, ոչ այլ ոք է, բայց եթէ Գուրգէն Ապուպէլն Արծրունին, եւ նրանց ուղարկեց տիրելու Վասպուրականը՝ խոստանալով այն բաժանել նրանց միջեւ: Այդպէս էլ եղաւ, սակայն Ափշինի օգնութեամբ վերադարձած Աշոտը ետ մղեց նրանց մինչեւ նրանց սեփական տիրոյթները<sup>7</sup>: Այսինքն՝ բացի Վասպուրականի հիմնական Արծրունի իշխաններից, այնտեղ գործունէութիւն են ծաւալում եւ տիրոյթներ ունեն Արծրունեաց տան այլ ներկայացուցիչներ եւս:

Համեմատեկով թովմա Արծրունու եւ Շապուհ Բագրատունու տեղեկութիւնները Վասպուրականի իշխանութեան՝ երեք մասի երկու անդամ յաջորդարար բաժանելու վերաբերեալ՝ կարող

<sup>5</sup> Անդ, էջ 184:

<sup>6</sup> Տե՛ս ԵՊԱԱ. Ա. Արմինիա ոստիկանութիւնը (պատմա-աշխարհագրական ուսաւմնակրութիւն), պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայրեմն ատենախոսութիւն, Երևան, 2006, էջ 64-69: Տե՛ս նաեւ ԵՊԱԱ. Ա. Արմինիա ոստիկանութեան սահմանները, «Պատմա-բանափրական հանդիսավորութիւն», 2005, թիւ 1, էջ 247-251:

<sup>7</sup> Տե՛ս թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 362:

ենք նշել, որ սահմանաբաժանումը տեղի չէր ունենում միեւնոյն սկզբունքով:

Խօսելով Աշոտ Արծրունու մահից յետոյ 904 թ. նրա եղբայրներ Գագիկ եւ Գուրգէն Արծրունի իշխանների միջեւ տիրոյթների բաժանման մասին, թովմա Արծրունին տալիս է մանրամասն տեղեկութիւններ, թէ Վասպուրականի յատկապէս ո՞ր գաւառներն են անցել եղբայրների իշխանութեան տակ. Գագիկին անցան Ճուաշը (Ճուաշ-ոռո), Թոռնաւանը, Արտազը, Մարդաստանը, Դառնին, Առբերանին, Աղանդ-ոռոտը, Բառիլովիտը (Բառիլովիտ), Պալունիքը, Մեծնունիքը, Տոսպուտունիքը, Բոռդունիքը (Բոռդունիք), Գուրգէնին՝ Անձահից Ճորը (Անձախիճոր), Կրճունիսը (Կրճունիք), Կուրզանովիտը (Կուրզանովիտ), Բոռն Մարդաստանը, Արճիշակովիտը, Առնոռունը, Մեծ եւ Փոքր Աղբակները, Ակեն, Տամբերը, Ըունան եւ Զարեհաւանը:

Ի սկզբանէ նշենք, որ երկու եղբայրների նախնական տիրոյթներից այս բաժանման ժամանակ բացակայում են Մոկքը՝ Գագիկի բաժնում եւ Պարսկահայքի ու Կորճայքի մի շարք գաւառներ՝ Գուրգէնի բաժնում. Վերջինի բաժնում Պարսկահայքի գաւառներից յիշտուակում են միայն Տամբերը, Ըունան եւ Զարեհաւանը, իսկ Կորճայքից՝ միայն Փոքր Աղբակը:

Դժուար է գերազնահատել թովմա Արծրունու տեղեկութեան արժէքը, որ զուրկ չէ նաև որոշ թերութիւններից: «Աշխարհացոյց»-ում բերուած Վասպուրականի գաւառացանկի համեմատ բացակայում են Բուժունիքը, Անձեւացիքը, Տրպատունիքը, Երուանդունիքը, Պասպատունիքը, Արտաւանեանը, Բագանը, Գարիթեանը, Գաղրիկեանը, Վարաժնունիքը, Գողթնը, Նախնաւանը, Մարանդը եւ Հայոց Ճորը՝ Վերոյիշեալ գաւառներից Տոսպուշտունիքը պէտք է տարանջատել Տոսպի եւ Ռշտունիքի, իսկ «զարդար Մեծ եւ զփոքր»-ը՝ Մեծ եւ Փոքր Աղբակների, որոնցից Մեծը Վասպուրականի մաս էր կազմում, իսկ Փոքրը՝ Կորճայքի<sup>10</sup>: Ըստ որում՝ այս խնդրով զբաղուած Վ. Վարդանեանը

<sup>8</sup> Անդ, էջ 388-390:

<sup>9</sup> Տե՛ս «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ յաւելուածովք նախնաց», Հրատ. Ա. ՍՈՒՔՐԵՍԱՆ, Վենետիկ, 1881, էջ 32-33. Տե՛ս նաև ՅԱՐՈՒԹԻՒՆԸԱՆ Բ., Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, «Բանքեր Երեւանի Համալսարանի», 1983, թիւ 3, էջ 110-112:

<sup>10</sup> Տե՛ս «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ», էջ 32:

վերջին տարանջատումը չի կատարում, որի հետեւանքով ըստ նրա Գուրգէնի բաժնում ընդգրկուած էր ոչ թէ 13, այլ 11 գաւառ<sup>11</sup>: Թովմա Արծրունին աւելացնում է, որ Զարեհաւանը, Ըստնան եւ Տամրերը «հանեալ էին ի Պարս Հայոց»<sup>12</sup>, այսինքն՝ գրաւուել էին Պարսկահայքից, որի կազմում են դրանք յիշատակում «Աշխարհացոյց»-ի մէջ<sup>13</sup>, իսկ Գողթնը եւ Նախճաւանը վասպուրականի կազմից հանուել էին չուրչ երկու հարիւրամեակ առաջ<sup>14</sup>:

Ըստ Թովմա Արծրունու՝ բաժանումից յետոյ, քանի որ Փոքր Աղբակը, Կորճէից աշխարհն ու Պարսկահայքը սահմանակից էին, Գուրգէն Արծրունու եւ Կորճէից գործափարների միջեւ դժութիւններ էին լինում: Դրա հետեւանքով Գուրգէնը վերագրաւեց Տամրերը եւ Ըռնա գաւառները, Ապուջափրի բերդը եւ Կորճէից Վէրի քաղաքում վերակացուներ նշանակեց: Մեր համոզմամբ, «աշխարհն Կորճէից»-ը Կորճայքին չի վերաբերում, այլ Պարսկահայքի գաւառներին, որոնք՝ մաս կազմելով Արծրունիների իշխանութեան եւ ղեկափարուելով վերջինիս գործափարներով, փորձ են կատարում չենթարկուելու Արծրունիներին: Շուտով շրջակայ ամիրայտթիւնների զօրքը ասպատակում է Լեկը, Աղզին, Կրերիքը եւ Ճահուկ գաւառը: Գուրգէնը հակայարձակման է անցնում, վերանուածում Ալլի կամ Ելի գաւառը, եւ թշնամիները ստիպուած փախուստի են դիմում<sup>15</sup>: Այսինքն՝ Ճահուկ գաւառը եւս մտնում էր Արծրունիների տիրոյթների մէջ: Ըստ Անանունի՝ նախկինում Վասպուրականի ոստիկան Գագիկ Ապումրուանը մանուկ Աշոտ Արծրունուն էր յանձնել Ճահուկը՝ Ագարակի բերդով<sup>16</sup>: Որսիրանքը եւս մտնում էր Արծրունիների իշխանութեան մէջ, որտեղ՝ ըստ Անանունի, Ափշինի յարձակումից ապաստանում են երեք եղբայրները<sup>18</sup>:

<sup>11</sup> Տե՛ս ՎԱՐԴԱՆԵՍՅ. Վ., Վասպուրականի թագաւորութեան սահմանները IX-XI դարերում, -«ՊԲՀ», 1969, թիւ 4, էջ 230: Մէկ գաւառանուն ուսումնասիրուը սիստմամբ բաց է թողեր:

<sup>12</sup> Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 390:

<sup>13</sup> Տե՛ս «Աշխարհացոյց Մովսէսի Խորհնացոյ», էջ 32:

<sup>14</sup> Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 390:

<sup>15</sup> Անդ, էջ 400:

<sup>16</sup> Անդ, էջ 402:

<sup>17</sup> Անդ, էջ 418:

<sup>18</sup> Անդ, էջ 424:

Անանունը 904 թ. բաժանման սեփական տարրերակն ունի: Հստ պատմիչի՝ նախապէս Գագիկը եղրօրը տուել էր «զանինուն, և ի ձորյն Ընձահից, մինչև ցերկուս ամրոցսն Սրճգայ և Զըմարայ»<sup>19</sup>: Երբ Գուրգէնը վերանուածեց Ելի գաւառը, «ուուեալ Գագկայ Վասպուրական իշխանի զբերդն Ագարակայ և զգաւառն Ճախուկ՝ առնու զբերդն Զոկ և զգաւառն կոչեցեալ Զերմաձոր, որ է մասն երկրին Մոկաց»<sup>20</sup>: Պարզ է, որ Անանունի հաղորդումն ի մեծի մասի համընկնում է Թովմա Արծրունու հաղորդմանը և որոշ տեղերում նոյնիսկ լրացնում է այն: Անանունի տեղեկութիւնից պարզում է, որ Գուրգէնի բաժնի մէջ էին Կորճայքի Փոքր Աղբակ գաւառի մէջ մտնող Զըմար և Սրինգ ամրոցները եւ Ճահուկ գաւառը՝ Ագարակի բերդով: Առանց որեւէ հաղորդման էլ պարզ է, որ Որսիրանք գաւառը, որ այդպիսով յայտնում էր Գուրգէն Արծրունու տիրոյթներով շրջապատուած վիճակում, մաս էր կազմելու նրա տիրոյթների: Գագիկի բաժնում յիշատակլում է նաև Մոկքը, կամ, որ աւելի ճիշտ է՝ Մոկքի Զերմաձոր գաւառը: Բացի այդ, Վասպուրականի հարաւարեւմտեան որոշ գաւառներ, ինչպէս ստորեւ ցոյց կը տանք, գտնուում էին կանգավար բերդում նատող Գուրգէն Ապուպելճի իշխանութեան ներքոյ:

Քարտէզագրելով երկու եղրայրների բաժիններում ընդգրրկուած գաւառները՝ ակնյայտ է գաւառում, որ Գագիկի բաժնում ընդգրկուած էին Վասպուրականի հիւսիսային եւ արեւմտեան, իսկ Գուրգէնի բաժնում՝ կենտրոնական եւ հարաւային գաւառները:

Վ. Վարդանեանը՝ գատելով Թովմա Արծրունու յիշատակութիւնից, կարծիք է յայտնել, որ Վասպուրականի իշխանութիւնից դուրս են մնացել Վասպուրականի արեւելեան գաւառները, այսինքն՝ նուաճուել արաբական ամիրայութիւնների կողմից<sup>21</sup>, որոնք նախկինում մեծաւ մասամբ Արմինիա ոստիկանութեան Երրորդ Արմինիա վարչական շրջանի մաս էին կազմում<sup>22</sup>, եւ հա-

<sup>19</sup> Անդ, էջ 432:

<sup>20</sup> Անդ:

<sup>21</sup> Տե՛ս Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտէզ:

<sup>22</sup> Տե՛ս ՎԱՐԴԱՆԵԱՆ Վ., Վասպուրականի բագաւորութեան սահմանները IX-XI դարերում, էջ 230:

<sup>23</sup> Տե՛ս ԵՂԻԱԶԱՐԵԱՆ Ա., Արմինիա ոստիկանութիւնը, էջ 69:

բաւարեւմտեան գաւառները<sup>24</sup>, որոնք եւս մտնում էին Երրորդ Արմինիայի մէջ<sup>25</sup>: Հարաւարեւմտեան գաւառների մասին զեռ կը խօսենք, իսկ այժմ նշենք, որ Վասպուրականի արեւելեան գաւառները, որ տարածում էին մինչեւ Փայտակարան աշխարհը<sup>26</sup>, նախքան 591թ. բաժանումը՝ կազմելով Հայոց մարզպանութեան Վասպուրական գնդի երկիր վարչական շրջանի մաս, այդ բաժանումից մնացին Հայոց մարզպանութեան կազմում, իսկ յետոյ էլ մտան Արմինիա ոստիկանութեան մէջ: Ցետագայում, երբ այդ գաւառներում արարներ էին հաստատում, այդ իրողութիւնը, ինչպէս Պարսկահայքի հիւսիսային գաւառների պարագայում, հիմք էր տալիս արար հեղինակներին՝ դրանք Աստրապատականի ոստիկանութեան մաս համարելու: Նրանք հաղորդում են, որ, օրինակ՝ Մարանդը Աստրապատականի մէջ էր մտնում<sup>27</sup>: Սակայն աշմուկադպասին, որ Ժ. Պ. պատմիչ է եւ քաջածանօթ էր Հայոց թագաւորութեան ընդդրկած տարածքներին, Մարանդը յիշատակում է Հայաստանի քաղաքների թւում<sup>28</sup>: Իսկ եթէ Մարանդը՝ մտնելով Հերի ամիրայութեան մէջ, Հայոց տէրութեան մաս էր կազմում, ապա վերջինի մէջ էին մտնում նաև Վասպուրականի արեւելեան միւս գաւառները: Այսուղի, հաւանաբար, տեղի է ունեցել հետեւեալը: Վասպուրականի նշեալ գաւառները՝ միաւորուած Հերի ամիրայի իշխանութեան ներքոյ, այլեւ Վասպուրականի իշխանութեան մաս չեն, այլ ուղղակիորէն ենթարկում են Հայոց թագաւորին, որ եւ ակնյայտ է դառնում Շապուհ Բագրատունու հաղորդումներից<sup>29</sup>:

<sup>24</sup> Տե՛ս Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտէզ, Հայաստանի պատմութեան ատրաս, Ա. մաս, Երեւան, 2005, էջ 42-43:

<sup>25</sup> Տե՛ս ԵՊԻՍ.ԶԱՐԵՍ.Ա. Ա. Արմինիա ոստիկանութիւնը, էջ 64-69:

<sup>26</sup> Տե՛ս ԵՐԵՍԵՍ.Ա. Միծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտէզ, Երեւան, 1963, ՅԱՐԱՒԹԻՒՆԵՍ.Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի եւ այլ աղբիւրների, Քարտէզ, Երեւան, 2001:

<sup>27</sup> Տե՛ս al-Istakhri, Kitâb masâlik al-mamâlik.-BGA, editio III, p. I, Lugd. Bat., 1967, էջ 181-182, Ibn al-Fakih al-Hamadhani, Kitâb al-boldân.-BGA, editio II, p. V, Lugd. Bat., 1967, էջ 285, «Kitâb al-a'lâk an-nafisa auctore Abû-Ali Ahmad-ibn-Omar ibn Rosteh et Kitâb al-Boldân auctore Ahmed ibn Abî Jakûb ibn Wâdhîh al-Kâtib Al-Jâkûbi».-BGA« editio II, p. VII, Lugd. Bat., 1967, էջ 106, Jakubi, էջ 171:

<sup>28</sup> Տե՛ս al-Moqaddasi, Kitâb ahsân at-tâkasim fi ma'rîfat al-âkâlim.-BGA, editio III, p. III, Lugd. Bat., 1967, էջ 51, 373:

<sup>29</sup> Տե՛ս Շապուհ Բագրատունի, էջ 67-71:

Անդրադառնալով Վասպուրականի հարաւարեւմտեան չիշատակուած գաւառներին, անհրաժեշտ ենք համարում տալ մի փոքրիկ պատմական ակնարկ, որ լոյս կը սփոխ այդ խնդրի վրայ: Գրիգոր-Դերենիկի օրօք (874/875-885) Գուրգէն Ապուպէլճ Արծրունին՝ բուն տիրոյթ ունենալով Մարդաստան գաւառը<sup>30</sup> եւ նախապէս տիրելով Սրինգ եւ Ջմար ամրոցները<sup>31</sup>, տիրում է Անձեւացիքն ու Արզնը եւ փորձ անում տիրելու նաեւ Տարօնը<sup>32</sup>: Նա տիրեց Անձեւացիքին՝ ամուսնանալով Անձեւացեաց մեռած իշխանի կողջ հետ<sup>33</sup>. Եւ իր նստավայր դարձրեց Կանգավար ամրոցը<sup>34</sup>: Վասպուրականի իշխան Գրիգոր-Դերենիկը կարողացաւ նրանից խլել Անձեւացիքի մի մասը՝ Նորաբերդ ամրոցով, որ նրան էր կտակել մեռած Անձեւացեաց իշխան Մուշեղը: Գրիգոր-Դերենիկը Գուրգէնին ճանաչել էր սոսկ որպէս Մարդաստանի իշխան<sup>35</sup>: Սակայն Գուրգէնին յաջողուել էր վերատիրել կորցրած Անձեւացեաց Հողերին<sup>36</sup>: 858 թ. գերութիւնից վերադարձել էր Աշոտ Արծրունին: Նա Գուրգէնից պահանջեց իր որդուն զիջել Անձեւացիքի մի մասը, սակայն տեղի ունեցած ճակատամարտում պարտութիւն կրեց<sup>37</sup>: Աշոտը կարողացաւ Գուրգէնի զէմ հանել Արմինիայի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու որդի Շապուհին, Մոկաց եւ Արզնի գորգերը: Ի վերջոյ նրանք հաշտուեցին, եւ ամէն մէկը մնաց իր տեղում<sup>38</sup>: Մեր համոզմամբ, հէնց այս պատճառով, գաւառարաժանման ժամանակ Գուրգէն Ապուպէլճի տիրոյթների մէջ մտնող Վասպուրականի իշխանութեան Անձեւացեաց եւ, թերեւս որոշ այլ գաւառներ չեն յիշատակւում երկու եղբայրների բաժիններում: Բացի այդ, Գուրգէն Ապուպէլճին պատկանող Մարդաստան գաւառի խնդիրը կասկածներ է յարուցում, քանի որ իշխանի գործունէութիւնը հիմնականում ծաւալւում էր Վասպուրականի իշխանութեան հարաւ-արեւմուտքում, իսկ Մարդաստան գաւառը գտնւում էր Վասպուրականի հիւսի-

30 Տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 322:

31 Անդ, էջ 306:

32 Անդ, էջ 324:

33 Անդ, էջ 324-326:

34 Անդ, էջ 364:

35 Անդ, էջ 326:

36 Անդ:

37 Անդ, էջ 330-332:

38 Անդ, էջ 332:

սում եւ սահմանակցում էր Ալբարատ աշխարհի կողովիտ գաւառին<sup>39</sup>: Բ. Յարութիւնեանը ցոյց է տուել, որ Բուն Մարդաստան գաւառը, որ յիշատակում է Գուրգէն Արծրունու բաժնում, նոյն Տրպատունիքն է<sup>40</sup>: Մեր կարծիքով, Գուրգէն Ապուակելճին պատկանող Մարդաստան գաւառը ոչ թէ Մարդաստանն է, այլ Բուն Մարդաստան կամ Տրպատունիք գաւառը, որ գտնուում էր Անձեւացեաց գաւառի հարեւանութեամբ<sup>41</sup>: Այն, անկասկած, նուանուել էր Արծրունեաց աւագ ճիւղի կողմից եւ 904 թ. բաժանմամբ անցել էր Գուրգէն Արծրունուն:

Բացի այդ, սիսաւում է Վ. Վարդանեանը՝ նշելով, թէ իրը Վասպուրականի թուով 13 կամ 14 գաւառ նուանել են արարական շրջակայ ամիրայութիւնները<sup>42</sup>: Նա իր հաշուարկը կատարում է հաշուի առնելով այն իրողութիւնը, որ «Աշխարհացոյց»-ը Վասպուրական աշխարհում նշում է 35, իսկ նրա որոշ ձեռագրեր՝ 36 գաւառ, չնայած «Աշխարհացոյց»-ի լաւագոյն գիտակներից Բ. Յարութիւնեանը ցոյց է տուել, որ Վասպուրականում կար 37 գաւառ:<sup>43</sup> Հստ թուզմա Արծրունու՝ երկու եղբայրների բաժիններում ընդգրկուած էին Վասպուրականի 23 գաւառ: Գուրս են մնում թուով 14 գաւառ, որոնք էլ ըստ Վ. Վարդանեանի պէտք է նուանած լինէին շրջակայ արարական ամիրայութիւնները:

Արծրունեաց տան պատմիչի հաղորդումները մեզ այն համոզմանն են բերում, որ այդ գաւառները Հայ Բագրատունիների տէրութեան ժամանակաշրջանում եւս մաս էին կազմում Վասպուրականի իշխանութեան: Արդէն տեսանք, որ եղբայրների բաժիններում չիշատակուող գաւառներից Անձեւացիքը պատկանում էր Գուրգէն Ապուակելճ Արծրունուն: Գրիգոր-Դերենիկի որդիների միջեւ հայրական ժառանգութեան բաժանման մասին խօսելիս թուզմա Արծրունին հաղորդում է, որ Գուրգէն Արծրու-

<sup>39</sup> Տե՛ս Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտէկ:

<sup>40</sup> Տե՛ս ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա. (արևմտնան և հարաւային աշխարհներ), Երևան, 2001, էջ 361-362:

<sup>41</sup> Տե՛ս ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը, էջ 361-362:

<sup>42</sup> Տե՛ս ՎԱՐԴԱՆԵԱՆ Վ., աշխ., էջ 231:

<sup>43</sup> Տե՛ս ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Բ., Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 110-112:

նուն բաժին հասաւ արեւելեան կողմը՝ Աղքակից արեւելք եւ զրա շուրջն ընկած գաւառներով, Պարսկահայքը, մինչեւ Կորդուքի, այսինքն՝ Կորճայք աշխարհի արեւմտեան կողմը եւ մինչեւ ուր հնարաւոր կը լինէր տիրել : Առաջին հայեացքից հասկանալի թուացող այս տեղեկութիւնը սակայն ծնում է մի քանի հարցադրումներ: Նախ՝ պարզում է, որ Կորճայքի՝ Աղքակի հայաւից՝ Փոքր Աղքակից սկսած մինչեւ արեւմտեան հատուածը մտնում էր Արծրունիների իշխանութեան մէջ, ինչպէս որ էր արաբական տիրապետութեան ժամանակաշրջանում: Յետոյ՝ Գուրգէնի տիրոյթների քարտէզագրումից պարզում է, որ չնայած ըստ պատմիչի Գուրգէնին բաժին էր հասել իշխանութեան արեւելեան հատուածը՝ ինչպէս Վասպուրականի, այնպէս էլ Պարսկահայքի գաւառներով, սակայն նրան էր անցել նաև Կորճայքի հիւսիսային հատուածի կենտրոնական եւ արեւելեան մասը (աւելի ճգրիտ՝ Կորդիքը, Ճահուկը, Որսիրանքը եւ Փոքր Աղքակը): Փաստօրէն նա տիրում էր Վասպուրականի իշխանութեան արեւելեան, հարաւային եւ հարաւարեւմտեան գաւառները: Թէեւ նման բաժանման տրամարանութիւնը փոքրինչ անհասկանալի է, բայց մեզ համար կարեւոր է մէկ այլ իրողութիւն: Եթէ այս գաւառները մտնում էին Արծրունիների իշխանութեան մէջ, ապա Երուանդունիքը, Անձեւացիքը եւ Բուժունիքը, որ այդ դէպքում յայտնում էին Եղբայրների տիրոյթներով շրջապատուած վիճակում (հաշուի առնելով նաև այն իրողութիւնը, որ Մոկքի իշխանութիւնը եւս գտնուում էր Արծրունիների գերիշխանութեան ներքոյ), ամենայն հաւանականութեամբ, պէտք է մտնէին Արծրունեաց տիրոյթների մէջ: Պատմիչը նշում է, որ Անձեւածեաց գաւառին տիրել էր դեռեւս Գուրգէն Ապուսկելն Արծրունին. «Գուրգէն օր ըստ օրէ անէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն եւ զոր յԱնձաւացիս եւ զոր յԱրզն...: Բայց յետ բազում յուզիցն եւ պատերազմացն եհաս տիրել նմա Անձաւացեաց տէրութեանն»<sup>44</sup>: Նման ճակատագիր էր վիճակուել նաև, ամենայն հաւանականութեամբ, Երուանդունիքին եւ Բուժունիքին, որոնք երկու Եղբայրներից եւ ոչ մէկի բաժնում չեն յիշատակուում: Գաւառացանկից գուրս մնացած Հայոց ձորը, որ յիշատակուում է «Աշխարհացոյց»-ում, իրենից ներկայացնում էր Երուանդունիքի, Գուկանի եւ Արտաշէսեանի ընդ-

<sup>44</sup> Տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 360:

<sup>45</sup> Անդ, էջ 324:

Հանրութիւնը<sup>46</sup>, այսինքն՝ իր տարածքով մաս էր կազմում Արծրունիների իշխանութեան: Նշենք նաեւ, որ Գուրգէն Ապուլելճի մահից յետոյ (890-ական թթ.) իշխեց նրա որդի Առող Արծրունին, որ յիշատակում է Ամիդի ամիրայից Սմբատ Ա-ի կրած պարտութիւնից քիչ առաջ<sup>47</sup>:

Ասպիսով պարզում է, որ յիշատակութեան մէջ պակասող 14 գաւառներից հինգը, որ տեղադրում են Վասպուրականի հարաւարեւմտեան հատուածում, եւս մաս էին կազմում Վասպուրականի Արծրունեաց իշխանութեան: Պակասող միւս գաւառներից Պարսպատոնիքի տեղադրութեան հարցում Ս. Երեմեանն այն կարծիքին է, որ այն եղել է Վասպուրականի ծայր արեւելեան գաւառը եւ զրադեցրել ընդարձակ տարածութիւն՝ նոյնանալով ներկայիս Ղարազաղին:<sup>48</sup> Բ. Յարութիւնեանը իրաւացիօրէն մերժում է այս տեղադրութիւնը՝ նշելով, որ ըստ «Զօրանամակ»-ի 50 զինուոր մարտազաշ դուրս բերող Պարսպատոնիքի իշխանը չէր կարող տիրել այդպիսի մեծ տարածքի:<sup>49</sup> Ցոյց տարով, որ Պարսպատոնիքը պէտք է գտնուէր արեւելտեան Վասպուրականում, Բ. Յարութիւնեանն այն տեղադրում է Հերից արեւելուտք կոտոր գետի հովտում գտնուող Գոգհովիտում՝ նշելով սակայն, որ չնայած իր տեղադրութիւնը գերծ չէ թէականութիւնից, սակայն աւելի մօտ է իրականութեանը:<sup>50</sup> Ի վերջոյ հետազոտողը՝ անդրադառնալով այդ գաւառի՝ Գագիկ եւ Գուրգէն իշխանների բաժիններում զիշատակուելուն, նշում է, որ այն թերեւս անցել էր Հերի ամիրայութեանը:<sup>51</sup> Սակայն Հերի ամիրայութիւնը եւս մտնում էր Հայոց տէրութեան մէջ: Վասպուրականի մնացած գաւառները՝ Արտաւանեանը, Բագանը, Գարիթեանը, Գագրիկեանը, Վարաժնունիքը եւ Մարանդը տեղադրում են Վասպուրականի՝ կոտոր գետից արեւելք գտնուող հատուածում:<sup>52</sup> Արեւելեան Վասպուրականի այդ վեց գաւառները, ինչպէս անսանք, մեծաւ մասամբ մտնում էին Արմինիա ոստիկանութեան Երրորդ Արմի-

<sup>46</sup> Տե՛ս ԵՐԵՄԵՍՆ Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 62.

<sup>47</sup> Տե՛ս Թողմա Արծրունի եւ Անանուն, էջ 364.

<sup>48</sup> Տե՛ս ԵՐԵՄԵՍՆ Ս., նշ. աշխ., էջ 77:

<sup>49</sup> Տե՛ս ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Բ., Մեծ Հայքի վարչա-Քաղաքական բաժանման համակարգը, էջ 370-371:

<sup>50</sup> Անդ, էջ 374-375:

<sup>51</sup> Անդ, էջ 375:

<sup>52</sup> Անդ, էջ 375-380:

նիա վարչական շրջանի մէջ: Արարական տիրապետութեան ժամանակաշրջանում Պարսկահայքի հիւսիսային հատուածներն ընդգրկող Հերի ամիրայութիւնը ձեռք է զցել, թերեւս, այս շրջանները, որի հետեւանքով դրանք այլեւս չեն յիշատակւում Վասպուրականի իշխանութեան մէջ: Սակայն այն ժամանակ, երբ Աշոտ Ա-ն կատարում էր իր նուաճումները, նոյն ժամանակ Գրիգոր-Դերենիկ Արծրունին Հերի եւ Զարեւանդ գաւառներն իրեն է ենթարկում<sup>53</sup>: Այդ ամիրայութեան մէջ էր մտնում նաեւ Մարանդը<sup>54</sup>: Սա նշանակում է, որ այդ գաւառներում ստեղծուած ընդարձակ ամիրայութիւնը որոշ ժամանակով մտնում էր Արծրունիների իշխանութեան մէջ: Նոյն է վկայում Յովհաննէս Դրասիանակերտացին: Ըստ նրա՝ Աշոտ Ա-ի՝ խալիֆայից թագ ստանալու ժամանակ Գրիգոր-Դերենիկը Հերի եւ Զարեւադի կողմերում նուաճում է քաղաքներ եւ գաւառներ<sup>55</sup>: Այնուհետեւ, արդէն Սըմբատ Ա-ի օրոք, Ատրպատականի Ափշին ամիրան՝ տեսնելով Սըմբատ արքայի մտերմութիւնը Բիւզանդիայի կայսր Լեռոնի հետ, որոշում է արշաւել Հայաստան: Նրան 30 հզ. զորքով ընդառաջ է գնում Սմբատ արքան: «Գնայր ընդ առաջ նորա մինչեւ ՚ի գաւառն Ռոտոկայ մերձ յԱտրպատական»<sup>56</sup>: Այսինքն՝ այստեղ սահմանագիծը նոյնն էր, ինչ մարզպանական ու ոստիկանական շրջանում Հերի եւ Զարեւանդ գաւառները՝ Ռոտոկը կամ Ռոստակը, մտնում էր Հայոց թագաւորութեան մէջ: Արդէն տեսանք, որ Մարանդը եւս մաս էր կազմում Հայ թագրատունիների տէրութեան՝ մաս կազմելով Հերի ամիրայութեան: Ըստ Կոստանդին Տիրանածնի՝ Աշոտ Ա-ն իր իշխանութեանն էր ենթարկել Հերի եւ Սալամասի (սալմաստ) արաբական ամիրայութիւնները<sup>57</sup>: Ալմուկադդասին նշում է, որ Հայոց թագաւորութեան մէջ ընդգրկուած էին Հերը, Սալմաստը (սալամաս), Ռումիան եւ Մա-

53 Անդ:

54 ՏԵ՛Մ Շապուհ թագրատունի, էջ 64:

55 ՏԵ՛Մ «Յովհաննու կարողիկոսի Դրասիանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Գ. Թոսունեանի, Երևան, 1996, էջ 142:

56 Անդ, էջ 162:

57 ՏԵ՛Մ «Օտար աղքիւրները Հայաստանի եւ հայերի մասին», «Բիւզանդական աղքիւրներ», Բ, Կոստանդին Տիրանածնին, թարգմ. բնագրից, առաջան եւ ծանօթ. Հ. Բարթիկեանի, Երևան, 1970, էջ 10:

րանդը<sup>58</sup>: Այսպիսով, Վասպուրականի եօթ գաւառ մաս էին կազմում Հերի ամիրայութեան, որ Աշոտ Ա-ի եւ Մմբատ Ա-ի օրոք ուղղակիօրէն հնդարկում էր Հայոց թագաւորին<sup>59</sup>:

Ինչ վերաբերում է Վասպուրականի մնացած երկու գաւառներին՝ Նախճաւանին եւ Գողթնին, ապա թովմա Արծրունին հաղորդում է, որ դրանք գարեր առաջ էին հանուել Վասպուրականից<sup>60</sup>: Հայ Բագրատունիների տէրութեան ժամանակաշրջանում Նախճաւանը, գատելով Շապուհ Բագրատունու մի տեղեկութիւնից, ըստ որի՝ Մմբատ Ա-ն նուաճել է Նախճաւանը<sup>61</sup>, այն ուղղակիօրէն մտնում էր արքունի տիրոյթների մէջ: Խնդիրն այն է, որ Նախճաւանի կարեւոր ուազմավարական դիրքը մզում էր Հայոց թագաւորին այն վերցնելու հսկողութեան տակ: Այնտեղով էր անցնում հարաւից եկող եւ Նախճաւանով Դուին ընթացող առեւտրական մեծ մայրուղին, որով էլ երբեմն Ատրպատականի ամիրաները ներխուժում էին Հայոց տէրութիւն: 902 թ. Մմբատ Ա-ն, ենենալ Մանավկերտի կայսիկների հետ բախման ժամանակ Վասպուրականի Արծրունիների ցոյց առւած օգնութիւնից, Նախճաւանը յանձնեց նրանց<sup>62</sup>, իսկ քիչ անց՝ գատելով թովմա Արծրունու յիշատակութիւնից, որ 904 թ. Գագիկ եւ Գուրգէն Արծրունի եղբայրների միջեւ Վասպուրականի գաւառների բաժանման ժամանակ նրանցից եւ ոչ մէկի բաժնում Նախճաւանը յիշատակուած չէ, այն ետ վերցրեց նրանցից<sup>63</sup>: Քանի որ Գողթնը Նախճաւանի հետ միասին ներկայացնում բնաշխարհագրական մի ամփոփ միջավայր եւ ուազմավարական առումով նրանից անբաժանելի էր, ապա Նախճաւանի մասին խօսելիս պէտք է նրա հետ անպայման ի նկատի ունենալ նաեւ Գողթնը: Հէնց դրանով էր պայմանաւորուած Նախճաւանի հետ միասին նաեւ Գողթնի անջատումը Վասպուրականից թովմա Արծրունու նկարագրած դէպքերից երկու գար առաջ: Դատելով Ղեւոնդի մի վկայութիւնից՝ արարական տիրապետութեան ժամանակաշրջանում Նախճաւանում ստեղծուել էր ամիրայութիւն, որի ամիրան, ըստ թովմա Արծ-

<sup>58</sup> Տե՛ս al-Moqaddasi, էջ 51:

<sup>59</sup> Տե՛ս Շապուհ Բագրատունի, էջ 67-71:

<sup>60</sup> Տե՛ս թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 390:

<sup>61</sup> Տե՛ս Շապուհ Բագրատունի, էջ 65:

<sup>62</sup> Տե՛ս թովմայ Արծրունի եւ Անանուն, էջ 382:

<sup>63</sup> Անդ, էջ 388-390:

բունու, իրահաջիմն էր<sup>64</sup> եւ, որը, անկասկած, ընդգրկելու էր նաև Գողթնը<sup>65</sup>:

Դատելով Թովմա Արծրունու տեղեկութիւններից՝ Արծրունիները տիրել էին նաեւ Մոկքը: Հստ պատմիչի, 895 թ. բաժանման ժամանակ այն անցել էր Գագիկ Արծրունուն<sup>66</sup>, իսկ այդ նշանակում է, որ Գրիգոր-Դերենիկը տիրում էր Մոկքը: Երբ Սմբատ Ա-ն արշաւեց Ազահունիք, նրա հետ էին Վասպուրականի մեծ իշխան Աշոտը՝ Դերենիկի որդին, նրա հետ՝ Մոկքաց Գրիգորն ու Անձեւացեաց զօրքը, քանի որ Մոկքաց եւ Անձեւացեաց իշխանութիւնները նա նուաճել էր<sup>67</sup>: Ինչպէս տեսանք, Մոկքը տիրում էր նաեւ Վասպուրականի ապագայ թագաւոր Գագիկ Արծրունին:



64 *Hann. 19304:*

<sup>65</sup> «Պատմութիւն Ղետնիկայ Մեծի վարդապետի Հայոց», Ա. Պետքըբուրզ, 1887 էջ 24.

<sup>66</sup> *Sk'ru' 0'midz'm Hədəməsh k̓i' H̓əmənəy*, 18, 360.

67 *USS* 49 380

ի մի բերելով վերոյիշեալ քննութեան արդիւնքները՝ նշենք, որ խնդրոյ առարկայ ժամանակաշրջանում վասպուրականի Արծրունիների իշխանութիւնը ներառում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի հողերի մեծ մասը, Պարսկահայքի կենտրոնական գաւառները եւ Կորճայքի հիւսիսային հատուածը։ Այս տարածքներում ներքին վարչական բաժանումը երբեմն փոփոխում էր։ Գուրգէն Ապուակելնը, որ հիմնական տիրոյթ ունէր Բուն Մարգաստան կամ Տրպատունիք գաւառը, տիրել էր Անձեւացիքը եւ շրջակայ գաւառները։ Անձեւացիքում Գուրգէնից յետոյ իշխում էր նրա որդիկ Ասոմբը։ Գագիկ Ապումրուանը (մահ.՝ 10-րդ դ. սկիզբ) տիրել էր Նկան, Սեւան եւ Կոտոր կամ Կոտորոց բերդերը, մի պահ նոյնիսկ՝ Վանայ բերդը։ Սակայն Գագիկ Ապումրուանից յետոյ նրա տիրոյթներն անցան Գագիկ Արծրունուն՝ Վասպուրականի ապագայ թագաւորին։ Հերի ամիրայութիւնը, որ ընդգրկում էր Վասպուրականի արեւելեան գաւառների մեծ մասը, ուղղակիորէն ենթարկում էր Հայոց թագաւորին։

### ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

**Territory and Administrative Divisions  
of the Principality of Vaspourakan  
at the End IX and the Beginning of the X Centuries**

ARMAN YEGHIAZARYAN

(summary)

At the time of Ashot I and Smbat I, the domains of the Artsrounies included a large part of Vaspourakan, the central regions of Parskahayk and the northern parts of Kochayk. In addition to the main heir of the Artsrounies, which possessed a large part of Vaspourakan and parts of Parskahayk and Korchayk, some descendants of later heirs possessed some south western and northern regions of Vaspourakan. At the time of Ashot I and Smbat I members of the Artsrounies divided the domains of their ancestors. The future king of Vaspourakan, Gagik divided his land with his brother. The northern and western regions remained with Gagik and the central and southern parts were given to his brother.